Սույն ծրագիրն իրականացվում է
Մարդու իրավունքների տուն Երևանի կողմից

This project is implemented by IREX Europe

This project is funded by the European Union

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարիքների գնահատման հետազոտություն իրականացնելու

Հետազոտությունն իրականացվելու է «COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն ու կայունություն» ծրագրի շրջանակներում

Ծրագրի նկարագրությունը. Մարդու իրավունքների տուն Երևանը **ԱՅՐԵՔՍ Եվրոպայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ**, իրականացնում է «COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, անկախ ակտիվիստներին և անկախ լրատվամիջոցներին՝ շարունակելու իրենց գործունեությունը COVID-19-ի համաճարակի ընթացքում և դրանից հետո: Դրամաշնորհները տրամադրվում են սոցիալական և բնապահպանական ուղղվածության այն ՔՀԿ-ներին, որոնք տուժել են COVID-19-ի համաճարակից, չունեն բավարար միջոցներ՝ իրենց աշխատանքն արդյունավետորեն շարունակելու համար, սակայն ունեն ստացած դրամաշնորհի միջոցով իրենց աշխատանքը կազմակերպելու և կայուն դառնալու ներուժ: Ծրագրի տևողությունը 4 տարի է:

Հետազոտության նպատակն ու շրջանակները. Հետազոտության նպատակն է իրականացնել Հայաստանի տարածքում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) քարտեզագրում, ինչպես նաև իրականացնել նախապես սահմանված թվով ՔՀԿ-ների կարիքների գնահատում: Մասնավորապես.

- իրականացնել Հայաստանի տարածքում գործող ՔՀԿ-ների քարտեզագրում՝ ըստ ԱՅՐԵՔՍ Եվրոպայի կողմից մշակված հարցաթերթի (չափորոշիչների) : Քարտեզագրման արդյունքներով (ելքային տվյալներով) պետք է կազմվի Հայաստանի տարածքում գործող ակտիվ ՔՀԿ-ների դատաբազա (Excel ֆայլով), ինչը հնարավորություն կտա, ըստ անհրաժեշտության, կատարել ՔՀԿ-ների ընտրություն՝ տարբեր չափորոշիչների ընտրությամբ. գործունեության ոլորտ, տարածք, կազմակերպության մեծություն և այլն,
- իրականացնել նախապես ընտրված՝ տարբեր ոլորտներում գործող առնվազն 30 ՔՀԿ-ների կարիքների գնահատում: Այդ ՔՀԿ-ները պետք է ներկայացնեն տարբեր ոլորտներ, ներառյալ՝ մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն (այդ թվում՝ կանանց իրավունքներ ու ԼԳԲՏՔ իրավունքներ), բնապահպանական խնդիրներ և այլն:

Դիմելու կարգը. Հետազոտության իրականացման համար կարող են դիմել **անհատ հետազոտողներ և հետազոտական կազմակերպություններ**՝ ներակայացնելով կարիքների գնահատման հետազոտության իրականացման գնային առաջարկ՝ նշելով հետազոտական աշխատանքների իրականացման գինը՝ ՀՀ դրամով: **Անհատ հետազոտողների** դեպքում՝ նաև անհրաժեշտ է ներկայացնել CV, որը պետք է ներառի արդեն իսկ իրականացված հետազոտական աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, դրանց առցանց առկա լինելու դեպքում՝ տալ հղումը կամ կցել դրանք (1-3 հետազոտություն): Այս պահանջը գործում է նաև **հետազոտական կազմակերպությունների դեպքում,** որոնք նաև պետք է նշեն իրենց կազմակերպության կայքէջն ու սոցիալական ցանցերում էջերը՝ առկայության դեպքում:

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է ԱՅՐԵՔՍ Եվրոպան, և այն կարող է չարտացոլել Եվրոպայի Միության տեսակետը:

Գնային առաջարկներն ու պահանջվող տեղեկատվությունն անհրաժեշտ է ուղարկել **մինչև 2020 թ. օգոստոսի 24-ը՝ info@hrhyerevan.org էլ. փոստային հասցեին**: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք գրել նշված էլ. փոստային հասցեին:

Ծանոթագրություն. Մարդու իրավունքների տուն Երևանը ստեղծվել է 2012 թվականին: Այսօր Տունն իր հարկի տակ միավորում է 5 կազմակերպություն: Մարդու իրավունքների տուն Երևանը նպատակն է լինել անվտանգ, մատչելի և ընդհանուր տարածք ակտիվիստների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, շարժումների, քաղաքացիական նախաձեռնությունների և իրավապաշտպանների համար, ովքեր հաճախ թրախավորվում են իրենց կատարած աշխատանքի համար: Տան մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք ստանալ Տան կայքէջից. https://hrhyerevan.org/: «COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք ստանալ՝ հետևելով հետևյալ հղմանը. https://hrhyerevan.org/news/rapid-response-support-grants/:

Մարդու իրավունքների տուն Երևան,

14.08.2020, Երևան

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է ԱՅՐԵՔՍ Եվրոպան, և այն կարող է չարտացոլել Եվրոպայի Միության տեսակետը: